



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

Ltin  
V 2268

1999 ,

Հ 15  
Տ 19 Ձ 10 Վ 10  
ՎԻԼՅԵԼՄ ՏԵԼԼ Հ 4.

# ՎԻԼՅԵԼՄ ՏԵԼԼ

Վ. ՕՍՏՐՈՎՍԿԻԻ



Ա. ԳԵՏԵՐԲԱՐԴԻ  
Ի ՏՊԱՐԱՆԻ Ի. Ն. ՍԿՈՐՈԽՈՎՈՎԸ:

1887.

Հայոց քրոջ աշխատա-  
մաթիք առ Խաչուած ով Եղ-  
անձա Քրիստո-  
նութեա Հայոց աշխատա-  
մաթիք առ Խաչուած ով Եղ-

18 XI 93 ամք.

Պազուական պատճեան կազմակերպութեա մի ժա-  
մանակ ապրում էր մի մեծ ազգ: Միանի  
ատարի իրար ետևից Կրանց հացի պարը լո-  
ւ լինում: Գրա պատճեանով ամեն ինչ է լո-  
թանգացաւ: Մարդիքը հաւաքառն, անու-  
խելքի տուին ու շատ միտք անելուց հայոց,  
Ճարները կարած, վճռեցին՝ որ չկ հ (վակի)  
զցին ամեն մի տասը հոգու մջ. օսկի ում որ  
ընկնի, նա պիտի թողնի իր հայրենիքը ու  
գնայ ինչ տեղ որ ուզում է. ել ուրիշ ճար-  
չը կար. հացը այնքան քիչ էր, որ ամենքին  
հերիքութիւն չը անիլ:

Մի խումբ տղամարդիք ու կանայք, տխուր  
ու տրատում, գուրս եկան ու գնացին գէպի  
հարաւ: Կրանք՝ իրանք իրանց համար նոր



ՎԻՐԵԼՍ ՏԵԼ

#4

4268-60

28 2241

Ճանապարհ էին բաց անում, իսկ հարկաւոր  
եկած տեղը՝ թուրի զօռով էին ձղում ու  
անց կենում: Վերջապէս, խումբը հասաւ ան-  
տառների մէջ կորած Ել'պեան\*) սարերը այն  
տեղ վէր եկան մի անմարդաբնակ ձորում, ո-  
րի ջուրը մի բարակ գետ էր ու մի լիճ: Տեղը  
բերքի կողմից շատ հարուստ ու գեղեցիկ էր՝  
չորս կողմը ձիւնապատ սարերով պատած.  
բայց այստեղ որ ասե՞ս, մարդկային հետք  
էլ չէր երկում: Միայն լճի ափին կար մի քո-  
սոտ խրճիթ. այնտեղ կենում էր մի նաւա-  
վար, որը՝ եթէ հազարից մի անգամ մարդ  
էր պատահում, անց էր կացնում լճի միւս  
կողմը: Ի՞այց սրանց բաղդիցն էր թէ չէ, մի-  
այն այս անգամ լիճը այնպէս էր ալէկոծվում,  
այնպէս էր կատաղած, որ անկարելի էր միւս  
ափը անց կենալ ու ոչ ոք էլ սկի սիրտ չա-  
րաւ:

Եյս նոր եկած ազգը, որը հելվետ էր աս-

\*) Ե՛ գշեկով տառը եւրոպական լեզուների 1 փափուկ հըն-  
չիւնն է արտապատում:

վում, մի լաւ ման եկաւ այս տեղերը ու տե-  
սաւ, որ սա շատ անտառներով ու ջրերով  
հարուստ երկիր է: Դրանից յետոյ հելվետ-  
ները մնացին այստեղ ու Ըվեց անունով մի  
շեն զցեցին: Ե՛հ, ինչքան քրտինք թափեցին  
նրանք. ինչքան ահապին ծառեր են արմա-  
տահան արել, մինչև որ անանցնելի անտառ-  
ները մաքրել են ծառերից. էլ ի՞նչ ասես, որ  
արած չը լինեն. Ճահիճներ են չորացրել ժայ-  
ռեր են կոտրատել ու յարմար ճանապարհներ  
բաց արել անդունդների վերևներով. էլ ի՞նչ  
ասեմ, մի խօսքով, առաջկայ անմարդաբնակ  
ու լուռ տեղեց գեղեցիկ ու մարդկերանցով  
լի մի տեղ են շինել:

Իսկ երբոր հելվետները տեսան որ տեղը  
նեղվածքութիւն է անում, նրանք Ռէյն, Շո-  
նա ու Աար գետերի միջում գանվող տեղերն  
էլ բռնեցին. զլանից յետոյ սկսեցին շվեյցա-  
րացի ասվել: Ո՞վ գիտէ, թէ քանի քանի հա-  
րիւր տարիներ էին ապրում նրանք այստեղ  
սարերում հօտեր արածացնելով ու թեթե-  
շարժ քարայծերի ետևից ընկած, չը նայելով

որ մարդուս կեանքը այդ տեղերում մի մազից  
էր կախված: Հովիւները ու որարդները, ո-  
րոնք իրանց ձակատի քրտինքով ու սեփական  
արիւնով էին մշակել իրանց նոր հայրենիքը,  
համարձակ ու աշխատասեր մարդիք էին. նը-  
րանց վախը միայն Աստուած էր, ել ուրիշ  
վախ չունէին: Իրանք քաջառողջ տղամարդներ  
ու լաւ նետածիգներ լինելով, միշտ պատրաստ  
էին իրանց անձը պաշտպանելու համար. ապ-  
րում էին իրանց պապենական սովորութիւն-  
ներով ու կարգերով. նրանց հողերովը անց է-  
ին կենում հազար տեսակ ազգութիւններ. այդ  
ազգերը միշտ ուղղում էին նրանց տիրել ի-  
րանց ձեռքի տակը զցել ու իրանց ձորար դար-  
ձնել. բայց շվեյցարացիք, պաշտպանված լի-  
նելով իրանց լաւ ծանօթ բարձր ու պինդ սա-  
րերով, կարողացան պինդ պահել իրանց ան-  
կախութիւնը. աշխարհիս երեսին անկախու-  
թիւնից ել թանգ ու լաւ բան չը կար շր-  
վեյցարացիների աչքում:

Տասներեքերորդ դարում շվեյցարացիք ե-  
րեք առանձին գիւղ կամ թէ, նրանց լեզուով

ասած, երեք կանտօն էին կազմում. այդ կան-  
տօններն էին Շվեց, Ուրի և Ունտերվալդեն,  
որոնց կառավարութիւնը, այդպէս ասված,  
ընդհանուր խորհուրդի ձեռքին էր: Այդ ընդ-  
հանուր խորհուրդի համար շվեյցարացիք ի-  
րանց միջից ընտրում էին ամենապատուաւոր  
ու փորձառու մարդկերանց:

1273 թուականին Պերմանիայում, որը այն  
ժամանակվայ ամենամեծ տէրութիւնն էր Խւ-  
րոպայում, թագաւոր նստեց Պուդոլ'ֆ ա-  
րաբուրդը: Այդ Պուդոլ'ֆ թագաւորը Շվեյ-  
ցարիայում շատ մեծ հողեր ուներ և հինգ  
նրա երեխայութեան օրերից շվեյցարացիք  
շատ սիրում էին նրան բարի լինելուն ու խա-  
ղաղ բնաւորութեան համար: Երբ նա թա-  
գաւոր դարձաւ, շվեյցարացիք իրանք իրանց  
յօժար կամքովը նրան իրանց գլխին հովանա-  
ւոր ընտրեցին, որ, բան է, մարդասպանութիւն  
կամ թէ մի մեծ վէճ կամ կոիւ պատահած  
ժամանակ, կարողանան գնալ նրա մօտք, որ  
նա իրանց գործը քննի և արդար դատաստան  
անի: Խոկ իրանք իրանց մեջ կառավարվում է-

ին էլի առաջվայ պէս՝ իրանց սովորութիւններին համեմատ։ Միայն մի մեծ գործ պատահած ժամանակ, ինքը Պուդոլ'ֆն էր զալիս Շվեյցարիա ու իր ճշմարիտ դատաստանը կատարում բոլոր ժողովուրդի առաջ՝ բաց երկնքի տակ։ Այս ամենի փոխարէն էլ շվեյցարացիք խօսք տուին, որ պատերազմ լինելուց գերմանացոց տէրութեանը օգնութիւն հասցնէն։ և իսկ որ նրանք իրանց սիրելի թագաւորի համար իրանց արիւնը չէին խնայում։ Պուդոլ'ֆն էլ իր կողմից՝ իր կուշը եկած շվեյցարացիների հետ այնպէս քաղցր, այնքան լաւ էր վարվում, որ սկի չեղած։ Շվեյցարացիք իրանց համար ապրում էին սարերումը հանդիստ ու բաղդաւոր՝ առանց ոչ ոքի դիպչելու։

Բայց շատ չը քաշեց նրանց աղատութիւնը։ 1291 թուականին Պուդոլ'ֆ կայսրը մեռաւ և նրա տեղը գերմանացոց դաշին նրանից նրա որդի Ալ'բրեխտը։ Աս շատ ժլատ ու խստասիրտ, գոռող ու անմատչելի մարդ էր. նրան ոչ տեսնել էր լինում և ոչ էլ հետը խօ-

սել։ “Նրա ուշքն ու միտքը շատ հարստանալն ու շատ հողեր խլել ու ձեռք դցելն էր միայն։ Ասպետները, որոնք Շվեյցարիայում հողեր ունեին, ուզում էին շվեյցարացիներին էլ ինչպէս Գերմանիայի միւս տեղերում, Ճորտեր դարձնեն։ Հէնց այդ ասպետներն էին, որ Ալ'բրեխտին զլսից հանեցին. նրանք պատմեցին նրան, թէ շվեյցարացիք հպարտ, ինքնակամ ժողովուրդ են. թէ նրանք գեղեցիկ տներ ու բազմաթիւ հօտեր ունեն և այն. թագաւորն էլ այս ամենը լսելուց յետոյ ցանկացաւ՝ որ, ինչ էլ որ ուզում է լինի, անպատճառ այդ հարուստ երկիրը նուածի՝ իր ձեռքի տակը դցի։ Նա առաջ սպառնալիքներով պահանջեց շվեյցարացիներից, որ նրանք իրանք-իրանց գան ու հպատակվեն իրան։ Իսկ այց շվեյցարացիք ոչ վախեցան նրանից և ոչ էլ եկան նրան խոնարհվելու։ Ալ'բրեխտը կատաղեց դրա վրա վրա, Շվեյցարիա ուղարկեց իր երկու տեղակալին (լեանդրֆօխտ) Հէսսլերին ու Լեանդրփերգին և սրանց լիակատար իրաւունք տուեց որ, ինչ որ ուզում են, անեն, միայն թէ նուածն այդ

ինքնակամ, իրասածի ազգը: Տեղակալները Շվեյցարիա հասան թէ չէ, իսկըն սկսեցին սարսափելի, անասելի բաներ անել:

Նրանք թոյլ չեն տալիս, որ շվեյցարացիք իրանց ապրանքները Շվեյցարիայից դուրս բերեն՝ ծախեն. ուրիշ երկիրներից բերվող ապրանքներից հարկ էին առնում. մի ամենաշեշին յանցանքի համար, իրու տուգանք, փող էին վերցնում: ՞Օանր էր, շատ էր ծանր Շվեյցարիային համար այս ամենը. բայց ինչ արած, նրանք դեռ չեն մոռացել հանգուցեալ թագաւորի բարի բնաւորութիւնը, նրա արած լաւութիւնները և այդ էր պատճառը, որ ամեն ինչ կրում էին առանց տրտնջալու:

Բայց քանի գնում էր՝ նեղութիւնները այնքան շատանում ու աւելի խիստ էին դառնում: Ամեն աեղեց օրէցօր աւելի վատ համբաւներ էր դալիս:

Մի օր, իրիկնադէմին, մի ձինորս, մի հովեւ ու մի որսորդ, հաւաքվելով երեք կանաօնի լճի ափին, խօսում էին իրանց գործերից. հովեւը իր խաչներից էր խօսում, ձինորսը ձըկ-

ներից, իսկ որսորդը, ի հարկէ, իր սիրելի որսորդից էր զբուցում: Յանկարծ, հեկեկալով, նրանց մօտն է վազում շվեյցարացի՝ Անրադ Բառումգարտենը, արիւնի մէջ կորած:

« Փ սէր Աստծյ, ասում է նա ձինորսին, ինձ անցկացրու լճի միւս ափը. ի՞նչ որ ուղում է լինի, ի՞նչ որ ուղում ես արա՝ միայն թէ ինձ ազատես . . . » :

Տեղակալի պահապանները, Բառումգարտենի ետեից ընկած, հալածում էին նրան: Նրա սպաններից մէկը, մի քանի զինուորների հետ, մտաւ խեղճի տունը, ինչ որ լաւ բան տեսաւ վերցնեց և, կարծես թէ այդքանը գեռ հերիք չէր՝ նրա կնոջն էլ խայտառակեց: Այս ամեն բոնութիւնները տեսնելուց յետոյ Բառումգարտենը էլ չը կարողացաւ համբերել ու տեղնուաեղը սպանեց սպային: Բայց, մինչև որ նա պատմում էր իր դարձը, սաստիկ փոթորիկ բարձրացաւ, ձինորսը սիրտ չէր անում խեղճ մարդուն լճի միւս ափը անց կացնել: Նրա բաղդիցը հէնց այն բօպէին նրանց մօտ եկաւ Ավելէլր Տէլլը: Աս չը դիմացաւ Բա-

ումգարտենի աղաջանք-պաղատանքներին ու  
ձկնորսին ասեց որ յետ անի կապած մակոյկը:  
«Ե՛հ, ինչ որ կը լինի՝ կը լինի, ասեց Տէլ-  
լը. յշաներս դնենք Աստծու կամքին. որքան  
ուժում ոյժ կայ կը փորձեմ, Բառումգարտեն  
եղայր. դատաւորների ձեռքից ևս քեզ կա-  
զատեմ, իսկ փոթորիկից թող Աստուած ա-  
զատի: Դու էլ ձկնորս եղայր, կնոջս կը մը-  
խիթարես, եթէ, բան է, Աստուած մի արաս-  
ցէ, զլսիս մի փորձանք գալու լինի. նրան կա-  
սես որ ևս արեցի այն՝ ինչ որ պարտաւոր է  
անելու ամեն մի քրիստոնեայ»:

Եյս ասելուց յեաց Տէլ'ն ու Բառումգար-  
տենը մակոյկ նստեցին ու գնացին: Լիճը սաս-  
տիկ կատաղած էր, ալէկոծում էր ու մակոյկը  
տաշեղե նման այստեղից այնտեղ էր զցում:  
Բայց Տէլ'ը, որը թիավարելում այնպիսի լաւ  
վարպետ էր, կարողացաւ խեղջ մարդուն միւս  
ամիր անց կացնել ու այդպիսով աղատել տե-  
ղակալի զինուորների ձեռքից: Հէնց որ նրանք  
նաւակի մէջ նստած ափից մի քիչ հեռացան  
թէ չէ, իսկըն եկան տեղակալի զինուորները

ու, տեսնելով, որ բանը բանից արդէն անց է  
կացել ձարները կտրած, ուզեցին իրանց վրէ-  
ժը մէկից հանել ցիրուցան արեցին խեղջ  
հովուի հօտերը ու կրակ տուին նրա աղքա-  
տիկ տուն ու տեղը:

Մաքի տունը ընկած, գլուխը քաշ զցած,  
նստած է իր նոր տան դրան մօտ հարուստ  
շվեյցարացի Ծատուֆախերը: Երէկի նրա  
տան մօտովը անց էր կենում տեղակալը. նա,  
նախանձը աչքերին, նայեց նոր շինութեանը  
ու ասեց. «օհօ, տեսէք, ի՞նչպէս են ապրում  
տեղս շվեյցարացիք. ի՞սկ որ, թագաւորի ապ-  
րուստ է եղել սրանց ապրուստը: Հըմ, մի քիչ  
էլ սպասեցէք. շատ չեքաշել ձեր այս տեսակ  
ապրելը»:

«Վայ ինձ համար, տունս ձեռքիցս դուրս  
է գալու, ասում էր ինքն իրան Ծատուֆա-  
խերը, ու այսպիսի տիսուր ու դառն մտած-  
մունքներից նրա գլուխը էլ աւելի էր քաշ  
ընկնում, կարծես թէ, սրտին մի ծանր քար  
զցեցին: «Նրա խելօք կինը աղատեց նրան այդ  
ծանր ու տիսուր մաքերից, ասելով. «Էլ ի՞նչ

ևս զլուխտ քաշ զցել. Ի՞նչ տղամարդ ես.  
դործ կատարելու, բան աւսնելու փոխանակ,  
զլուխն է քաշ զցում: Ճ՛ր, փառք Աստծու,  
իսօ մենակ դու չես զզված այդ անիրաւ տե-  
ղակալեց. մի՞թէ բոլոր կանտօններում քիչ  
մարդ կայ նրա գեմ, նրանից դժգոհ. Ի՞նչ կը  
կը լինէր, որ ամենքդ հաւաքվէիք մի տեղ ու-  
խելք խելքի տուած՝ միտք անէիք ու մի հը-  
նար զանէիք ազատվելու այդ անօրէն ու ծանր  
լուծից: Ըստ սկի չե՞ս լսել որ մեր ծերերը  
ասում են:

Մէկ մարդի կոխւը կոխւ չէ,  
Ծատ մարդկանց կոխւը մահ չէ:

— «Ճշմարիտ որ, միտք արեց Ծատառվա-  
խերը, ամօթ ինձ համար. իմ կինս, թոյլ կը-  
նիվարմատ տեղովը, ինձ խելքի է զնում: աես  
սկի խելքս կտրել է, ի՞նչ տղամարդ եմ ես.  
կինս ինձանից համարձակ է, կուզես, ես տղա-  
մարդ եմ նա կնիկարմատ»: Այս ասելով, նա  
վեր կացաւ նստած տեղից ու ձեռքը ճակատին  
քանդով մտածում էր, թէ արդեօք ի՞նչ կը լի-

նի իր ընտանիքի հալը՝ եթէ գործը ըլյաջո-  
ղի: «Նա մտածում էր և աեսում, որ այդ գէպ-  
քում իսկ որ շատ գառնութիւններ կը գայ իր  
զլիսին և որ իր ընտանիքն էլ չի պըճնիլ այդ  
ցաւերից: Ծատառվախերը ինքն իրան ասում  
էր. «պատերազմի, կուի ժամանակ ցիրուցան  
կը դառնան խանչերը, շատ ու շատ հայրեր կը  
կոտորվեն, քանի քանի աներ կը կործանվեն,  
հազարաւոր կանայք ու երեխաներ պահպատի  
ու անօգնական կը մնան...»: Ի՞սկ նրանիւրը,  
Ճերտուգան, ի զուր տեղեց չեր սել կը հօ-  
րից հին պատմութիւններ. այս գիտքը թէ  
ինչպէս են շվեյցարացիք կոխւնես առնել իրանց  
հարկան ազգերի հետ. նա լուրջ ու իրանց  
պատերը արիւնի ու ճակատի քրստինքով էին  
ներկել ու պարարտացրել իրանց հողերը:

— «Ի՞նչ անենք, այ մարդ, ինչու ես այդ-  
պէս վախենում կուից ու աւերմունքից, ա-  
սում էր Ճերտուգան, վեսս չը կայ. թող ձեզ  
կոտորին. կարծես թէ մեզ, կենդանի մնացած-  
ներիս, համար էլ ուրիշ ճար չի լինիլ. խելքդ  
ում է գնացել կարծում ես թէ մենք ձեզա-

նից յետոյ իսկոյն կընկնենք թշնամիների ձեռքը, որ էլ բան չի մնայ որ մեր գլուխը չը բերին: ԶԵ, այդ կողմից միամիտ կաց. մենք էլ մեր թշյլ տեղովը ազատվելու ճանապարհ կը դժոնենք. փառք Աստծու, ի՞նչ կայ. ժայռեր շատ կան. այս բարձր ժայռերից ինքներս մեզ կը դցենք անդունդները ու կը պրծնենք նրանց ձեռքից»:

Վնոջ այս վերջին խօսքերը շարժեցին Շատառվախերի սիրտը. կարծես, այդ խօսքերը արդամարդութիւն ու համարձակութիւն տուին նրան: «Նա բարձրացրեց մինչև այն ժամանակ քաշ դցած գլուխը, զրկեց կնոջը ու ասեց նրան. «ԶԵ, ով որ մի այդպիսի քեզ նման սիրտ ունեցող կին ունի, նրա համար աշխարհիս երեսին սարսափելի բան չկայ. նա վախ ըռնի, նա ուրախութեամբ կոիւ կը գնայ հայրենի հրովար. քեզ նման կին ունեցողը չի իրանայիւ իր թիկունքը հայրենիքի օգտին զոհելու: Դու տանը մնացի՞ր, քո տնտեսութիւնի արա. միայն տես՝ աչքդ քեզ վրա պահիր, որ ամեն մի ուխտ գնացող օտարական, ամեն մի

վարդապետ, որը մեր տան շեմքովը կը մտնի հանգստանալու համար, առանց կուշա կերակուրի չի մնայ: Խս գնում եմ կանտօննելը, որ ման գամ ու գտնեմ այնպիսի ընկերներ, որոնք հայրենի երկրի համար կարող են զոհել իրանց անձը»:

Հենց այդ միջոցումն էր, որ տեղակալը սկսեց մի բանդ շինել տալ Ալ'տղօրֆում՝ անհնազանդ շվեյցարացիների համար: Այդ շինութեան վրա ժողովուրդի մեծ բազմութիւն էր բան անում: Էլ ծեր, էլ կի՞ն, էլ երեխայ՝ միւնցին էր նրանց համար. ով էր հարցնում թէ կարող ես բան անել, թէ ոչ բոլորին էլ զօռով քշում էին դէպի այնտեղ և քար ու հող էին կրել տալիս, որ բանը շուտ գլուխ գայ: Յոզնածութիւնից ոտերը հազիւհազ քաշ տալով, խեղձ ժողովուրդը քար էր կրում հէնց իրան համար շինվելիս բանդի համար. իսկ վերակացուն, կոշտ ու կոպիտ յիշոցներ տալով, բանեցնում էր բանւորներին: Յանկարձ, որ տեղից էր որտեղց չէր՝ մի դափի ձայն եկաւ: Օքնուորների մի խումբ էր գալիս. նրանք՝

Հանդիսաւոր կերպով ձեռքներին բռնած մի  
երկար ձողը որի ծայրին մի ինչոր գդակ էր  
գրած, ծանրումեծ քայլերով առաջ էին գա-  
լիս: Ժողովուրդի բազմութիւնը զարմացած  
ընկել էր զինուորների ետևից ու գնում և  
չէր հասկանում թէ սա ի՞նչ նոր բան է հր-  
նարել աեղակալ Հէսսլերը: Օխնուորները այդ  
ձողը գետնին տնկեցին, իսկ սպան բարձր ձայ-  
նով կարդաց Հէսսլերի հրամանը: Նա (Հէսս-  
լերը) ուզում է իմանալ թէ ով է իրան հր-  
նապանդվում և ով չէ հնազանդվում: և դրա  
համար էլ պահանջում է, որ իր գդակին էլ  
նոյն պատիւը տան, ինչ որ իրան են տալիս.  
Նա հրամայում է, որ գդակի մօտով ամեն մի  
անցուդարձ անող վերցնի իր զիսարկը ու զր-  
լուկ տայ գդակին: Իսկ ով որ այս հրամանը  
չը կատարի, նա կը զրկվի իր ազատութիւնից  
և ունեցած չունեցածից:

Ունտերվալդեն կանոնի բաներն էլ սրա-  
նից լաւ չեն. տեղակալի սպաներից մէկը եկել  
է ու քշել տարել ծեր Մելիստալի եղները:  
Մելիստալի որդի Արնովդը չքարողացաւ դե-

մանալ այն անպիտանի կողմից հասցրած վե-  
րաւորանքին. զորս դու պատուիրեցեր, մի լաւ  
ծեծեց նրան, իր ճիպոտը նրա վրա կոտրատեց:  
Հալածանքներից վախենալով ու կամենալով  
իր կեանքը փրկել իր ծերունի հօր համար,  
ինչպէս նրա մինուձարը, նա փախաւ՝ գնաց  
մի ուրիշ կանաօն. բայց առանց նրան մի անա-  
սելի բան պատահեց: Տեղակալը նրա հօրից  
պահանջեց, որ նա իր որդու տեղը ասի: «Օե-  
րը երգում կերաւ, որ ինքն էլ չըգիտէ թէ ի՞նչ  
տեղ է իր որդին, Արնովդը: Եյն ժամանակ  
այդ անսաստուածը կանչել տուեց գահիձներին,  
հրամայեց որ խեղճ ալւորին վէր զցեն գեանին  
ու աչքերը հանեն, ասելով. «Ճը, լաւ, ասենք  
թէ որդիդ այստեղ չէ, դու խօ իմ ձեռքիւ  
ես»: Դեռ գա ոչինչ կարծես թէ այդ քիչ էր  
նրան. Խեղճին ինչ որ ուներ չուներ ձեռքից  
խլեցին, և նա գոնից դուռ ընկած, կոյր աղ-  
քատի նման մի փայտ ձեռքն առած, ողորմու-  
թիւն էր ինդրում Աստուած սիրողներից:  
Տեղակալի ձեռքից փախած ու թագ կացած  
որդին զարհուրանքով լսեց այդ տիուր համ-

բաւը՝ այդ օրվանից Արմոլ'դը վճռեց, որ ինչ  
էլ որ լինում է լինի, պիտի հօր վրէժը հանի:

«Տեսէք, հիմիկվանից ձեզ ասում եմ, — ա-  
սեց նա Շատուֆախերին ու Տէլի աներոջ՝  
Վալ'տեր Փիւրստին — եթէ դուք, ձեր տնե-  
րի ու հօտերի համար վախենաք ու տեղակա-  
լի առջև վեղ ծոեք, այն ժամանակ ես իսկոյն  
կը գնամ սարերը, կը հաւաքեմ բոլոր հովեւ-  
ներին և նրանց կը պատմեմ այս բոլոր չարա-  
գործութիւնների մասին: Միթէ մեզ երեխա-  
յութիւնից հէնց ի զուր տեղից են նետաձը-  
գութիւն սովորցրել միթէ կացին բռնելը ի  
զուր ենք սովորել», ասում էր երիտասարդ  
Արմոլ'դը, աշխատելով համոզել ծերերին: «Ել  
մենք ի՞նչ մարդ ենք. անասունը անասուն լի-  
նելով Աստուած նրան էլ պաշտպանելու դոր-  
ծիք է առել: Վասը հէնց մենք՝ մարդիք ենք, որ կանք.  
մենակ մենք ենք, որ սպասում ենք մինչև որ ուրիշները գալիս են ու մեր աչ-  
քերը հանում»:

Քաջասիրտ երիտասարդի խօսքերը ծերե-  
րին տեղահան արին. նրանք իսկոյն վճռեցին,

առաջ մի գնալ ու խորհուրդ հարցնել այն  
հողատէր բարօններից, որոնք միշտ շվեյցա-  
րացիների հետ լաւ էին վարչում և հարկա-  
ւոր եղած ժամանակ միշտ օգնութիւն էին  
հասցնում, իսկ յետոյ իմաց տալ երեք կան-  
տօնների բնակիչներին, որ ամեն մի կանտօնից  
տասը ընտրված մարդ գիշերը հաւաքվեն սա-  
րերումը մի տեղ, որպէս զի խորհուրդ անեն՝  
տեսնեն թէ ի՞նչ են անում, ի՞նչ չեն անում:  
Եյս ինչ Շատուֆախերը ու Վալ'տեր Փիւրս-  
տը Շվից և Ուրի կանտօններումն էին մէկ մէկ  
հաւաքում հայրենիքի համար ցաւողներին, Եր-  
նոլ'դ Մելխտալ'ն էլ Ունտերվալ'դինումն էր  
բանի կացել: «Նա բարձրանում էր սարերը ու  
այնպիսի դիք տեղերով էր գնում, որ կարծես  
թէ կեանքից ձեռք էր վերցրել ձանապարհին  
ոչ մարդ էր պատահում, ոչ կացարան. ծարա-  
ւելս՝ սառողցների ջրերիցն էր խմում: Վեր-  
ջապէս, նա հասաւ Ալպեան հովեւների աղ-  
քատ խրճիթները: Եյս տեղերում արդէն լը-  
սել էին տեղակալի արարմունքները և ամեն  
տեղ, ուր Մելխտալ'ը պատմում էր իր ան-

բաղդ հօր զլսին եկածը, նրան շատ սիրով և  
ուրախութեամբ էին ընդունում: Անկեղծ սրբ-  
տով էին նրան «բարով հաղար բարի եկար»  
ասում և, իբրև աւստրիացիների տուած նե-  
ղութիւններին պատասխան, նրանք վէր էին  
բերում պատերից կախ արած ժանդոտած սու-  
րելը: Ըստյարիայի ամեն մի անկիւնոմ, երբ  
Վրհովդը տալիս էր Յատառֆախերի ու Առաջ-  
տեր Փիւրստի պէս պատուաւոր մարդկանց ա-  
նունները, իսկըն ամեն մի լսողի աչքերից քա-  
ջութեան կրակ էր թափում: ամենքն էլ եր-  
դգում էին, որ կը կատարեն ամեն ինչ ինչ որ  
նրանք ասեն, ինչ որ նրանք հրամայեն:

«Հայրենիքի համար ամեն ինչ կը զոհենք,  
թէկուզ մեր կեանքն անդամ» ասում էին նր-  
անք:

Վրհովդը այդ կերպով, մի տնից միւս տու-  
նը մտնելով, տեսաւ ու խօսեց իր կանտօնի բո-  
լոր զիւղացիների հետ և վերջապէս հասաւ  
իր հայրենի ձորը. այնտեղ էր նրա խեղճ հայ-  
րը կոյր ու աղքատութեան մէջ ընկած՝ նա  
պառկած էր դարմանի (յարդի) վրա, որը ու-

րիշները խղճալով, բերել ու փռել էին նրա  
տակին: Երնովդը տեսաւ իր խեղճ հօրը, բայց  
լաց չկաւ: «Նա իր դարդը ցոյց չէր տալիս.  
սրաի խորքերումն էր թազըրել իր ցաւերը.  
նրա միտքը միայն նա էր՝ թէ ի՞նչպէս անի,  
որ կարողանայ հայրենիքը օտարների ձեռքից  
ազատել: Ել տեղ չկար, որ նա եղած չը լինէր.  
Էլ սարերի կիրճեր, էլ խոր ու մութ ձորեր  
չը թողեց՝ ամեն տեղ էլ մտաւ ու ամեն տեղ  
էլ ժողովուրդին ապստամբութեան յորդորեց:  
Դեռ այս բոլորը ոչինչ նա վարդապետի շո-  
րեր հագած, ներս պլծաւ աւստրիացիների  
երկու ամենապինդ բերդերը ու ինքը իր աշ-  
քերովը տեսաւ ու տեղեկացաւ նրանց զօրու-  
թեան մասին: Ահա այդպէս, իր կեանքը միշտ  
վտանգի ենթարկելով, այս երիտասարդը մի  
երկու շաբաթում ամեն ինչ կարողացաւ պատ-  
րաստել մինչև այն օրը, երբոր երեք կանտօն-  
ների զբած ժամանակին, վերջին անդամ ընդ-  
հանուր խորհուրդ անելու համար, ամենքն էլ  
մի տեղ պիտի հաւաքվէին: Աերջապէս այդ  
օրն էլ հասաւ:

Առւո ու հանդարտ գիշեր է: Անտառապատ բարձր ժայռերը, ունքերնին կախ զցած, նայում են դէպի Ռիտոլիի ձորը: Նեռուից երեսում է Փիրվալ' գշտագտի լիճը. այնտեղ՝ նրա մօտ խառնվում են միասին երեք կանտօնների սահմանները: Լուսնի գիշեր է. լուսնի պայծառ լուսից սառույցները պսպղում են հաղար ու մի փայլով. նոյնպէս պայծառ են փայլում տարին աասներկու ամիս ձիւնով ծածկված սարերի ահագին շղթաները: Ահա այն սարի նեղ ու կեռումեռ կածաններովը վէր են գալիս դէպի քաշ մի տասը հոգի հասարակ գիւղացիներ. սրանք Ունտերվալ' գեն կանտօնի ընտրված մարդիքն են: Ամենից առաջ գնում է Արնօլ' գ Մելստալ' ը. այս խեղձ հովեւները, տուն ու տեղը թողած՝ ով զիտէ թէ ինչ հռու տեղերից, վեր են կացել եկել խորհուրդ անելու ու իրանց գլխի ձարը տեսնելու: Դըրանցից երկուսը իրար հետ չունեն, մէկ մէկու հետ այդ երկուսը թշնամի են ու ահա քանի տարի է, որ մի կտոր անպէտք հողի համար իրար միս են ուտում: բայց ի՞նչ կանես, որ

Հիմա դրանք ամեն ինչ մոռացել են, ու իրանց թշնամութիւնը մի կողմը դրած, իրար ձեռքից բռնած, գնում են դէպի ներքեւ: Ամենից շուտ տեղ հասան Ունտերվալ' գեն կանտօնի մարդիքը նրանք խսկըն ձորի միջին կրակ վառեցին ու, կրակի չորս կողմը նստոտերով սկսեցին մընացածներին սպասել: Բայց դա էլ չի շատ երկար քաշեց. միւս կանտօնյիններն էլ շուտ եկան: Լձի երեսին մի մակոյկ երեաց. նրա միջին նստած է Ծտառվախերը՝ Ծվիցի տասը ընտրված մարդկերանց հետ: Դեռ ափը չը հասած, նրանք գոռալով բարեռում են Ունտերվալ' գենից եկածներին: Ահա նրանք էլ տեղ հասան ու գուրս եկան մակոյկից. ամենքն էլ զինուորված են աղեղներով, նետերով ու հին, իրանց պատերից մնացած, սուրերով: Նրանք եղբայրաբար, ուրախ ուրախ բարեռում են ու ձեռք տալիս իրանցից շուտ եկած Ունտերվալ' գենիցներին. թէև իրար առաջին անգամն էին տեսնում, բայց այնպէս սիրով էին իրար հետ խօսում, որ տեսնողը հէնց կիմանար, թէ ուրանք վաղուց են մէկզմէկու ձանաչում: Արանք

ամենքն էլ իրար հետ մի սիրով ու մի ցանկութեամբ էին կապված. բոլորն էլ մի սիրով էին սիրում իրանց հայրենի սարերը. ամենքն էլ մի ցանկութիւն ունեին՝ պաշտպանել թշնամիներից իրանց կանանց ու երեխաներին։ Աչա մնացածներն էլ եկան. բարձրում՝ ժայռերի վրա երևացին նրանք. զրահաւորված, չահերը ձեռքները առած, լուսաւորելով իրանց խոր ու մութ տեղերով ընկած ճանապարհը, գալիս են նրանք գետի ներքեւ։ Արանք էլ Ուրի կանտօնի ընտրվածներն են, նրանց առաջնորդումէ Տէլլի ծերունի աներ՝ Աշալ'տեր Փիւտար։ Դրանց հետն է և զառամեալ ուժից ընկած քահանան, գաւազանը գետնին գետ տալով, տմոմբալով, գալիս է նրանց հետ. բայց երեւում է, որ շատ յոզնած է, որովհետեւ ոտները զօռով է փոխում։ Չը նայած գիշեր ժամանակին ու ճանապարհի դժուարութեանը, նա՝ իբրև հաւատարիմ հովիւ, չի ուղղում անտեր թողենի իր հօտը։ Մենակ քաջ որսորդ Վիլհէլմ Տէլլին է պակաս այստեղ։ Շատու Փախերը նրան էլ էր կանչել այստեղ՝ Պիւտի,

բայց որսորդը, նրա ձեռքը սեղմելով, ասել էր.

«Ինձ ասելը ի՞նչ հարկաւոր է, մի՞թէ Տէլլը վտանգի ժամանակ մենակ կը թողնի իր ընկերներին. այն Տէլլը՝ որը պլծացնում է գառնը անդունդ գլորվելուց։ Ինձ խորհուրդի միք կանչել ախր ես գարդակ խօսքերով ի՞նչ օգնութիւն պիտի հասցնեմ ձեզ է՛տ չէ, խորհուրդը ու խօսքերը իմ բանս չէ իմը պահ սա է»։ այս ասելով, նա մեկնեց իր տղամարդի ձեռքերը։ «Երբ բազուկներս ձեզ հարկաւոր կը գան, այն ժամանակ բաւական է, որ մի խօսք ասեք. մեկ էլ կը տեսնէք, որ Տէլլը ձեր կողքին կանգնած է»։

Տէլլը սուտ ասելը ըսդիտէ։ Այս սարերումը ամենքն էլ նրան լաւ են ճանաչում. բոլորն էլ գիտեն, թէ այս քիչ խօսող, միշտ ունքերը վրա տուած մարդը ի՞նչ մարդ է. պատճառն էլ հենց այդ է, որ ոչ ոք չի զարմանում, թէ ինչո՞ւ նա տեղս՝ Պիւտիի ձորումը չէ։

Ել մարդ չունեն սպասելու. Աշալ'տեր Փիւտարըն էր որ եկաւ. և աշա երեք կանտօնի՝ Ու-

րի, Շավիցի և Ունտերվալ'դենի ընսարվածները, թուով երեսունուերեք հոգի, վեր կացան ու շոջանաձև կանգնեցին: Ծարունի տէրտէրը հրամայեց, որ բոլորեքեանն էլ տափը խրեն իրանց սուրերը և մի «ամման» կամ խորհուրդի կարգադրիչ ջոկեն իրանց միջեց: Առաջ մէկ ընտրեցին Շատառվախերին, բայց նա չկամեցաւ որ ինքը լինի գլխաւորը և ցոյց տուեց իննուուուն տարեկան ծերունի Ռեղինդին, որովհետև նա էր իրանց միջին ամենից տարիքաւորը: Եւ ահա այս մութնուզիշերին, բաց երկնակամարի տակ, Ռիւտլիի ձորի միջին սկսվեց խորհուրդը: Այս այն խորհուրդն էր, որի վրա շվեյցարացիք երգեր են կապել և այդ երգերը մինչեւ օրս էլ նըրանք երգում են:

Մի քանի խօսքով Շատառվախերը պատմեց, թէ ինչպէս մի ժամանակ իրանց պապերը եկել են այս երկիրը:

«Նրանք իրանց ձեռքով մշակել են այս աղքատ հողերը. նրանք իրար հետ մի արիւնով էին կապված ու մի հայրենիք էր նրանց սընունդ ու կերակուր տուել և մեծացրել: Այս

ինչ ուրիշ ազգերը, յաղթվելուն պէս, հնագանդվում ու ընդունում էին յաղթողների իշխանութիւնը, շվեյցարացիք պինդ էին պահում իրանց անկախութիւնը. նրանք միայն իրանց յօժար կամքովը մտան գերմանացոց թագաւորի ձեռքի տակը: Մի անգամ չէ, երկու անգամ չէ, որ նրանք գերմանացիների համար արիւն են թափել. բայց տեսէք, թէ փոխարէնը իշխան էն հատուցանում նրանք. Էլ խաշների հօտեր չի մնացել, որ տարած ըլլինեն. Էլ անտէր ու անպաշտպան մնացած ծերեր, Էլ կանայք, Էլ երեխայք, բոլորին էլ չարչարում են ու տանջում: Երբ մարդ տեսնում է, որ աշխարհքում էլ արդարութիւն չի մընացել, ասումէր Շատառվախերը, երբ դանակը ոսկորին է համարում, երբ համբերութիւն ասածդ կեանք չէ այլ ես, այլ մահ է, այն ժամանակ մարդ պիտի Աստծուն աղօթք անի ու թողութիւն ինդրի և ողբրած Աստուածը թողութիւն կը չնորհի այն արիւնի համար, որը այդ մարդը թափումէ իր աղքատիկ ու նեցած-չափածածի, քաղցր ու սիրելի հայրե-

նիքի, կնոջ և զաւակի պաշտպանութեան համար»:

« Շատառվախսերի ասած խօսքերը ամենքի վրա մեծ ազգեցութիւն ունեցան: Ի՞ոլորն էլ այնպէս վառվեցին, որ ամեն մարդ էլ ձեռքը տարաւ դէպի իր սուրը. ամեն մէկն էլ պատրաստ էր հէնց այն բոպէին գնալ՝ յարձակվել թշնամու վրա ու հանել իր սրտի վրէծը. բայց տէր հայրը հանգստացրեց նրանց ասելով.

« Որդիքս, աւելի լաւ կը լինի, որ դործը խաղաղութեամբ վերջացնենք, եթէ կարելի է: Խ՛չ, գեռ ով է իմանում, կարելի է սկի Ալ'բրեխտ թագաւորը ըստիտէ էլ, որ մեզ այսքան նեղացնում են. առաջ, եկէք մի գանգատ ուղարկենք նրան. կը տեսնենք, եթէ գարդներիս դարման չեղաւ, այն ժամանակը մենք ինքներս մեր զրւխի ճարը կը տեսնենք. միայն մենք լինենք սաղ ու մեր զէնքերը ոչ պակաս»:

« Այց Շակեցի կանտօնի գիւղացիներից մէկը, որին արդէն մի անգամ կանտօնի կողմից ուղարկել էին թագաւորի մօտ, ասեց, որ իրան ըլթողեցին էլ որ Ալ'բրեխտի երեսը տեսնի և

հէնց ինքը թագաւորը հրամայել էր՝ թէ « այն գիւղացուն ասեցէք, որ ես շվեյցարացիներին երբ և իցէ մի ուրիշ ժամանակ կը մտաբերեմ»:

« Ենւ, վերջապէս, Ալ'բրեխտից ի՞նչ լաւ բան պիտի սպասենք, ասում էր գիւղացին. մի՛թէ դա այն Ալ'բրեխտը չէ, որ անիրաւութեամբ ու առանց մի պատճառի կոփւներ է զցում անգաղաք իր հարեւանների հետ, որ ինչ է զօռով ուրիշի հողերը ու հարստութիւնները իր ձեռքը դցի»:

Դրանից յետոյ առաջ եկաւ Ուրի կանտօնցի ծերունի Վալ'տեր Փիւրատը:

« Եղբայրներս ու բարեկամներս, —սկսեց նա— իմացած լինեք, որ մենք նոր նոր շահէրի ետևից չենք ընկնում: մենք միայն ուղում ենք ազատվել մեր վզին զրած ծանր լուծից, որի երեսը մեր պապերը տեսած էլ չեն եղել. Ուղում ենք, որ մեզ հանգիստ թողնեն, չը նեղացնեն, չը դիպչեն ոչ մեր հողերին, ոչ էլ մեր կանանց ու երեխաններին. ուղում ենք, որ մեզ չը վիրաւորեն, մեզ համար բանդեր չը շինեն. մեզ թողնեն, որ ապրենք այն-

պէս՝ ինչպէս որ ապրել ենք մինչև օրս Հարիւրաւոր տարիներ՝ հանգիստ, մեր հալաւ աշխատանքով։ Ելի առաջվայ պէս, ինչպէս որ հարկն է, պատիւ կը տանք Ալբրեխտին՝ ինչպէս թագաւոր մարդու. եղբայր, ով որ հողի հարկ է տալիս, թող սրանից յետոյ էլ աղնիւ կերպով տայ, ինչպէս որ առաջ էր տալիս։ Աննենք այն՝ ինչ որ հարկաւորն է, ինչ որ մեր պարտքն է. էլ դրանից աւել անելը հարկաւոր չէ։ Մենք միայն ուղում ենք վոնդել տեղականերին ու նրանց ամրոցները քարուքանդ անել և եթէ կարելի կը լինի՝ այս բանը կանենք առանց կուի, առանց արիւնի. հարկաւոր չէ ի զուր տեղից արիւն թափել։ Թող մեր թագաւորը տեսնի ու իմանայ, որ այդ բանում մենք մեզ չունենք. մենք զէնքի ենք դիմում, որով կետեւ մինչև այդ տեղն են հասցրել մեզ։

Այդպէս շվեյցարացիք իրանց մէջ շատ երկար խօսեցին ու վճռեցին, որ սպասեն մինչև ջրօրհնեքը. ասում էին, որ այն ժամանակ տեղակալ բերդը մտնելը հետո կը լինի. որով-

հետեւ կը կարծեն, թէ մենք էլ ենք ընծայ բերողներից. մեր դժուարը բերդ մտնելն է. մըտանք թէ չէ բերդը իմացէք՝ որ մերն է. համել սրա լաւը նա է, որ մինչև ջրօրհնեքը շատ ժամանակ ունենք, այնպէս որ օրով առաջ կարող ենք զէնքերի պատրաստութիւն տեսնել որ բերդը մտնելուց յետոյ պաշարի պակասութիւն չը լինի. մեր բերդը մտնելուն պէս՝ իսկըն սարերումը կրակներ կը վառեն. այդ ընդհանուր ապստամբութեան նշանը կը լինի. ով գիտէ, կարելի է, երբ աւստրիացիք տեսնեն, որ ամբողջ երկիրը իրանց դէմ է վեր կացել՝ հէնց իրանք ուղենան բանը խաղաղութեամբ վերջացնել։ Ահա թէ ինչե՞ր էին խօսում շվեյցարացիք։

Մինչև որ դրանք այսպէս խորհուրդ էին անում, արևել քիչ քիչ ընկաւ սարերի թիւները։ Ամենքն էլ ակամայ դգակները վերառեցին ու սկսեցին աղօթք անել իրանց գրքի աջողութեան համար։ Քահանան բոլորին օրհնեց ու ասեց.

«Աիրելի՛ որդիներս. հէնց հիմա, այս սուրբ

լուսաբացին՝ երբ մեր այս ձորերումը ամենքն էլ դեռ քնած են, եկէք, երդումով հաստատենք մեր խօսքն ու դաշինքը։ Այս լուսէից յետոյ եղբայրանանք ու երդվենք, որ մեզանից ոչ ոք իր միւս ընկերին մենակ չի թողնի՛՝ ոչ դժուար ընկած տեղը, ոչ փորձանիքի և ոչ էլ դառնութեան ժամանակ։ Ազատ լինենք, ինչպէս որ ազատ են եղել մեր պապերը. լաւ է մեռնենք, քան թէ մեր տուն ու տեղը, մեր ընտանիքները գերութեան մէջ թողնենք։ Յոյսներս դնենք Աստծու վրա ու մարդկային զօրութիւնից չը վախենանք. այն ժամանակ թողնէն որ լինում է լինի»։

Դրանց հին սովորութեան համեմատ, ամենքն էլ խորհրդաւոր կերպով երեք մատները դէպի երկինք բարձրացրած, կրկնեցին երդումի խօսքերը ու եղբայրաբար մէկդմէկու համբուրեցին։ Ամեն մէկն էլ մի տեսակ փոխվել էր, կամ թէ ինչպէս ասում են, շարժված էր. ինչպէս երեսում էր, ով ինչ որ այստեղ տեսել ու լսել էր ի զուր չէր անցել նրա համար։ Նրանք իրար հաստատ խօսք տուին, որ լռու-

թեամբ ընկերներ հաւաքեն ընդհանուր գործի համար. դրանից յետոյ շվեյցարացիք կամաց կամաց ցրիւ եկան. ամեն մարդ գնաց իրանց տուն։ Իսկ արեգակը իր պայծառ լըսը արդէն տարածել էր ձիւնապատ սարերի գագաթների ու սառների վրա. նա լրւսաւորել էր նոյնպէս այն մարդկերանց ճանապարհները, որոնք դըրանից մի քիչ առաջ դաշն էին կապել միասին ապրելու կամ միասին մեռնելու իրանց հայրենիքի համար։

Պայլհէլմ Տէլլի կինը՝ Ճեղվիգան իմացաւ, որ Ռիւլիում խորհուրդ կաց՝ վախեցաւ, որ չը լինի թէ տեղակալի դէմ դաւադրութիւն լինի ու իր մարդուն էլ խառնեն այդ բանի մէջ։ Այդ Ճեղվիգան թէ առողջութեամբ և թէ սրտով թոյլ մի կին էր. ամբողջապէս իր ընտանիքի և տան գործերովն էր լինում զբաղված. երբ Տէլլը գնում էր որսի, այդ խեղճինիկը վախը սրտից չէր զցում ու մինչև նրա տուն գալը, սպասելուց աչքը ջուր էր կտրում։ Իսկ երբոր մարդը տուն էր գալիս ու պատմում, թէ ինչ տեղեր է եղել՝ Ճեղվիգան սար-

սափելով՝ էր լսում նրա սարերում արած անվախ քաջագործութիւնները։ Ամեն անգամ, երբ Տէլլը տանից գուրս էր գալիս, Նեղվիգային այնպէս էր թւում, թէ նա՝ Տէլլը Ճանապարհը կորցրել է սառների միջին. մէկ էլ հէնց էր, թէ ոտն է գուրս պլիծնում ու նա բարձր ժայռերի գլխից անդունդն է գլորվում, իսկ նրա հուեից ահազին քարեր են թափվում ու նրան իրանց տակովն անում։

Մօր սիրաը նեղանում էր, երբ տեսնում էր որ Տէլլը իր փոքրիկ երեխաներին նետ զցելն էր սովորցնում. այդ բողէներում խեղճի սրբախութիւնից խսկոյն ջուր էր մաղվում, երբ մտածում էր որ նրանք էլ մի օր իրանց հօր նման, կեանքից ձեռք վեցրած, ուրախ ուրախ ընկնելու են այդ վտանգաւոր տեղերը։ Ըիւտիի խորհուրդը Նեղվիգան իր համար դարդ էր շինել. ինչ որ էլ անում էր չէր անում՝ այդ բանը չէր կարողանում մոռանալ։ Ենդադար գնում էր, գալիս ու Տէլլին հարցուփորձ անում նրանց գաւաղբութեան մասին. աղաչում, պաղատում էր, որ նա այդ բանին

չը խառնվի, ասելով, որ նրա կեանքը հարկաւոր է իր կնոջ ու երեխաների համար, որ իրանք խեղճ են, որ առանց նրան իրանք անտէր ու անօգնական կը ֆւան. բայց ում էր ասում, ով էր լսողը։

«Զէ, ևս կարող չեմ ընկերներիցս բաժանվել չէ. ոչ կարող եմ, ոչ էլ ուզում եմ», ասում էր Տէլլը։

Նենց այդ խօսելու միջոցին էր, որ յանկարծ Տէլլը վեր կացաւ և գնաց Ալ'տգօրֆ Նեղվիգայի հօր՝ Վալ'տեր Փիւրստին տեսնելու։ Նեղվիգան իմանում էր, որ տեղակալ Նէսալերը հիմա այնտեղ է. այն էլ գիտէր, որ նա չի սիրում իր մարդուն, ուստի սկսեն լրան խնդրել որ այսօր Ալ'տգօրֆ չը գնայ։

Իսկ Տէլլը ոչ թէ մենակ կնոջ խօսքը չը լրաց, այլ և իր պատիկ որդուն՝ Վալ'տերին էլ իր հետը տարաւ, ասելով, որ պապի մօտն է տանում։ Նեղվիգան, վախութիւնից սրտածաք եղած, մնաց տանը մենակ իր ամենափոքը երեխայի հետ. խեղճ մայրը աչքերը գցել էր իր մարդու ու երեխայի քամակից, որոնք քանի

գնում՝ այնքան հեռանում էին. վերջապէս,  
նրանք բոլորովին հեռացան ու այլ ևս չերե-  
ւացին:

Աշխարհի հրապարակում երևում է մի  
ձող՝ հետեւի գդակը ծայրին: Չողի կողքին  
երկու զինուոր է կանգնած. դրանց հրամայել  
են, որ մտիկ տան, որպէս զի այդ տեղով ե-  
կող գնացողը գլուխ տայ գդակին: Զինուոր-  
ներն էլ են մնացել շուարած. ի զուր տեղից  
են նրանք առաւօտից մինչև երեկոյ կանգնած  
սպասում. ոչ ոք էլ չի ուզում գլուխ տայ գը-  
դակին. դիտմամբ, ամենքն էլ ուրիշ ճանա-  
պարհով են գնում, որ ինչ է գդակի մօտով  
չանցնեն: Իսայց աշա երեաց Վահիչէլմ Տէլլը.  
Նա հէնց այդ ճանապարհովն էր գալիս: Նրա  
զէնքը մի աղեղ է, որից նա երբէք չի բաժան-  
վում. իր փոքրիկ Վաշտերի ձեռքից բռնած,  
դալիս է ու պատմումէ նրան, թէ իրանց Շը-  
վեյցարիայից բացի սարերի քամակին ուրիշ  
շատ ու շատ երկիրներ էլ կան: Այդպէս հայր  
ու որդի, զրոյց անելով, իրանց համար միամիտ  
դալիս են մօտենում գդակին. սա նրանց աշ-

քովը չե ընկնում: ուզում են նրա մօտով անց  
կենալ առանց իմանալու թէ բանը ինչումն է.  
բայց մէկ էլ տեսնում են, որ մի ինչոր զի-  
նուոր հրացանի նիզակով կտրում է նրանց  
Ճանապարհը ու հրամայում է, որ Տէլլը գլ-  
ուխ տայ գդակին: Տէլլը զինուորի ասածը  
չուզեց կատարել բայց զինուորը ասեց, որ այդ  
անհնազանդութեան համար կը զցին բանով:  
Բանդի անունը լսելուն պէս, փոքրիկ Վաշ-  
տերը լաց եղաւ ու սկսեց օգնութիւն կանչել:  
Երեխայի ձայնից հրապարակը հաւաքվեցին  
մի քանի զիւղացիներ, որոնք այդ ժամանակ  
այդտեղից մօտ ճանապարհով անց էին կե-  
նում: Վաշտեր Փիւրսան էլ էր նրանց հետ:  
Խեղձ երեխան իր պապին տեսաւ թէ չէ, իս-  
կոյն աչքերը արտասունքով լցված վազեց նը-  
րա մօտը, ինդրելով որ նա չը թողնի որ իր  
հայրիկին բանզը զցին: Փիւրսար հիմա հաս-  
կացաւ թէ բանը ի՞նչ տեղ է: Նա ուզեց իր  
փեսայի տեղ երաշխաւոր լինել բայց զինուոր-  
ները իրանց ասածին էին. նրանք իրանց էշն  
էին քշում, ու սկսեցին Տէլլին կապոտել, որ

տանեն բանդը զցեն։ Բայց քանի գնում էր՝  
այնքան հրապարակը լցվում էր աղաղակի վը-  
րա եկած ժողովուրդով, որովհետեւ այդ լուրը  
ամեն տեղ հասել էր։ Եյդ անասելի ու չը տես-  
նված բռնութիւնը վրդովեց զիւղացիներին։  
Նրանք վճռեցին Տէլլին ձեռքից չը թողնել և  
քիչ էր մնացել որ թափվէին զինուորների վրա։  
Բայց հէնց այդ լոպէին որսկանների փողերի  
ձայներ եկան։ «տեղակալը գալի՞ս է, տեղակա-  
լը գալի՞ս է»—լսելի եղաւ ժողովուրդի միջեց։  
«Կնուորները հէնց որ այդ լսեցին, սկսեցին  
առաջվանից աւելի զոռալ։ «դաւաճանութիւն  
է սա. ապստամբութիւն է սա. ընդդիմու-  
թիւն է»։ Հէնց այս խօսքումն էր, որ ան-  
տառից երեւաց հէսսլեր՝ ձի նստած։ Նա բա-  
զէով թռչուն որսալու էր զնացել և հիմա իր  
զինուորված մարդկերանցով վերադառնում էր  
որսից։

«Դէ՛, հըմ ձանապարհ տուէք. յետ քաշ-  
վեցէք. ձանապարհից ռադ (կորէք). դէ՛,  
շուտ»։ այս ասելուց յետոյ նա զինուորներին  
հարցրեց, թէ «ի՞նչ կայ, որ այսպէս հաւաք-

վել են»։ Օկնուորներից մեկը մատով ցոյց  
տուեց գէպի Տէլլը ու ասեց հէսսլերին։

— «Ե՛ աղա, տեսնում ես, մեղաւորը այս  
բանուգործը կտրված յիմարն է. սա է այս  
դալմաղալի պատճառը. չի ուղում թէ գդակին  
զլուխ տայ, զրա համար էլ ես ուզում եմ տա-  
նեմ բանդը զցեմ։ Բայց ժողովուրդը չի թող-  
նում։

Նրեսը մռայլած նա լսեց այս խօսքերը ու  
մի քիչ լուռ կենալուց յետոյ դարձաւ գէպի  
Տէլլը այս խօսքերով։

— «Միթէ դու այնքան քիչ ես յարգում  
թագաւորին և ինձ նրա փոխանորդին, որ  
չես ուզեցել պատիւ տալ այս գդակին, որը  
հէնց նրա համար է կախ տուած, որ իմանան  
թէ ով է հնազանդ կամ ով չէ հնազանդ։ Ա-  
ռաջի մարդը դու ես, որ իմ հրամանը չես  
կատարում»։

— «Եղա, բաշխի՛ր ինձ այս անգամ, չիմա-  
նալով եմ մեղք արել։ Քո հրամանը չը կա-  
տարելը, որ ասես, մոքովս էլ չի անցել»։ հէսս-  
լերը մի քիչ լուեց ու յետոյ ասեց։

— «Տէ՛լլ՝ ճշմարիտ է այն, որ ասում են,  
թէ նետ զցելում դու վարպետ ես, ասում են,  
այդ բանում քեզ հաւասար մարդ չկայ և որ  
դու այս կողմերում առաջինն ես»:

Մինչև հօրը բերան բաց անելը, որդին՝  
Վալտերը նրա տեղ պատասխանեց, ասելով.

— «Եյ՛, այո՛, աղա՛. ճշմարիտ է, իմ հայրս  
հարիւր քայլում, ինչ խնձոր որ ասես, նետով  
ծառից կը կտրի ու վէր զցի»:

— «Չը լինի թէ սա քո որդին է», հարցրեց  
Հէսսերը Տէլլին:

— «Եյ՛, աղա՛»:

— «Ե՞լ ունես, թէ սա է»:

— «Ո՛չ աղա՛, երկուսն է»:

— «Երկուսից որի՞ն ես շատ սիրում»:

— «Եղա՛, երկուսին էլ մէկ եմ սիրում»:

— «Դէ՛, որ այդպէս է, լաւ: Եթէ զորդ  
են ասում, որ դու նետով խնձորը ծառից կը տ-  
րում ես՝ վէր զցում, գէ՛, մէկ հնարդ ցոյց  
տուր մեղ. քո որդու գլխիցը խնձորը նետովդէ  
թոցընւ: Ի՞այց տե՛ս, հիմիկանից ասում եմ  
հա՛, լաւ տնտղիր. եթէ խնձորը մի անգամից

ըլ թոցըիր, բաս իմացած լինես, որ զլուխտ  
թոցնել կը տամբ»:

Ժողովուրդը ահուգողի մէջ ընկաւ այս  
սարսափելի հրամանը լսելուց և մի ձայն ան-  
դամ չը հանեց: Խեղջ հայրը ի զուր տեղից  
էր աղաչում ու պաղատամ Հէսսերին:

«Եզատի՛ր ինձ դրանից, Աստուած սիրես,  
թող որդեսպան չը դառնամ. մի՞թէ ես իմ  
ձեռքովս իմ հարազատ որդու արիւնը պիտի  
թափեմ», ասում էր Տէլլը: Եւ իսկ բաւական  
էր որ ձեռքը մի քիչ դողդողար՝ իր որդուն  
սպանած պրծած կը լինէր: Ի՞այց Հէսսերը  
նրան ականջ չէր դնում: Նա անողորմ էր,  
սիրաը քար էր կտրել:

«Ասում են, որ դու անսովոր բաներ ես  
սիրում»—պատասխանեց նա—«Ասում են, որ  
դու մի ուրիշ տեսակ մարդ ես. քո ապլիլդ  
ու մտածելդ էլ է մի ուրիշ տեսակ. Հէնց դրա  
համար էլ ես մի անսովոր քաջադորութիւն  
չոկեցի քեզ համար»: Ամենքն էլ մնացել էին  
զարմացած ու չպիտին, թէ տեղակալը հանճք  
է անում, թէ իսկն է ասում: Ի՞այց նա (տե-

ղակալը) իր կողքի ծառից մի խնձոր կտրեց,  
ու զառնալով հրապարակում հաւաքված բաղ-  
մութեանը, գոռաց. «Հը, դէ, այ ժողովուրդ, դէն  
կացէք, տե՛ղ տուեցէք: Ուժսուն քայլ  
չափեցէք: Հը, տե՛ս, հա. ծուռ չը խփես», ա-  
սեց նա Տէլլին: Իմ ձեռքիս ես գու, եթէ ու-  
ղենամ, կարող եմ քեզ սպանել տալ իսկ զրա  
փոխարէն քո վիճակդ քեզ եմ յանձնում: Քո  
ձեռքիդ է՝ ապրելդ էլ, մեռնելդ էլ. թէ կա-  
րողացար սիրտդ ու ձեռքերդ պինդ պահել  
այն ժամանակ՝ խօսք չըկայ, կասեմ լաւ նետ  
գցող ես»:

Ո՞չ ձէսալերի թիկնապահների խնդրելը, որ  
նա իր անողում հրամանը փոխի, ո՞չ Վալ-  
տեր Փիւրատի նրա առջե չըքել ու աղաւելը.  
ոչնչ էլ չօգնեց, բոլորն էլ ի զուր էր: ձէս-  
լերը՝ կարծես թէ, խուլ էր, ոչ ոքի չէր լսում:  
Փոքրիկ Վալտերը մօտեցաւ իր գետնին չո-  
քած պապին, ասելով.

«Վե՛ր կաց, վե՛ր, պապի. Բ՞նչ ես չըքել այդ  
քարասիրտ մարդու առջե: Դարդ մի անիլ.  
դու ասի՛ր, տեսնեմ, ես ո՞րտեղ կանգնեմ: Գի-

տես թէ վախենում եմ, չեմ վախենում: Հայ-  
րիկիս նետը ինձ չի դիպչել նա այնպիսի նետ  
գցող է, որ թռչելու ժամանակ էլ է թռչուն  
վէր գցում».

Ձէսալերը հրամայեց, որ Վալտերին ծա-  
ռից կապեն. բայց նա իր մօտ եկած զինուու-  
րին տղամարդի պէս զրոհ տուեց ու չը թռղեց  
որ կապի, ասելով.

«Ի՞նչ ես անում. ուզում ես ինձ կապի՞լ.  
պէտքը չէ, չեմ ուզում: առանց այդ էլ ես  
ոչ շունչ կը քաշեմ, ոչ էլ տեղիցս կը շարժվեմ:  
Իսկ եթէ կապէք, ես համ կը գոռամ, համ  
ոաներս գետնին կը խփեմ, մի խօսքով, տեղս  
հանգիստ չեմ մնալ»:

Ճարները կտրած, ուզեցին, գոնէ, աչքերը  
կապուտեն. բայց երեխան դա էլ չը թռղեց որ  
անեն.

«Ի՞նչ է, հէնց էք իմանում, թէ իմ հայ-  
րիկի նետիցն եմ վախենում, ասեց Վալտե-  
րը: Միամիտ կացէք, աչքս էլ չեմ ճպիլ:  
Հայրիկ, սա չի հաւատում, մի ցոյց տուր է՛.  
ցոյց տուր, որ դու լաւ նետ գցող ես. այս ա-

նիրաւը մեր գլխին ուզում է փորձանք բերի:  
Հենց սրա հակառակը՝ նետդ գցի՛ր ու խըն-  
ձորը գլխից մի լաւ թռցրու»։ Եյս խօսքերը  
ասելով, նա արձակ համարձակ գնաց դէպի  
ծառը. ինձորը գրեցին նրա գլխին։ Ի՞ազմու-  
թիւնը լուռ ու սարսափով նայում էր սրան։

«Հը, ի՞նչպէս ես. ինձ համար կարծես թէ  
աղա է, ասեց Հէսալերը Տէլին, մի քիչ սպա-  
սելուց յետոյ, ամեն ժամանակ զինուորված.  
դու ինքդ ձորտ, բայց նետդ միշտ ձեռքիդ.  
մի րոպէ էլ նետդ ձեռքիցդ չես տալիս. այ,  
հիմա քեզ համար լաւ նշանակ. դէ՛, եթէ  
լաւ տղայ ես, եթէ լաւ խփող ես՝ մի խփի՛ր,  
տեսնեմ, ի՞նչպէս ես խփում»։

Տէլլը աղեղը լարեց ու նետը վրա դրեց.  
բայց իսկըն խեղձի աչքերը սեացան, գլուխը  
շուռ տուեց ու աղեղը ձեռքից վէր ընկաւ։  
Կանայքը վայ արին։

«Եղա, ասեց Տէլլը, առաջեն անգամ Հէսո-  
ւերի առջեւ բերան բաց անելով—աղա, ինձ  
սպանիր, ինչ ուզում ես արա, ինչ պատիժ  
ուզում ես տուր, միայն ինձ ազատի՛ր այս

կրակից. ինձ մի ստիպիլ որ այս նշանակին  
խփեմ, ի սէր Աստծու»։

«Դէ՛, ի՞նչ եմ անում քո մեռնելդ. իմ ին-  
չիս է հարկաւոր, ասում էր Հէսալերը. ես,  
հենց այնպէս, ուզում եմ տեսնեմ, թէ ի՞նչ-  
պիսի նետ գցող ես գու։ ի՞նչ կայ, կարողա-  
ցար խօ այն փոթորիկովը Ի՞առումզարտենին  
լճի միւս կողմը անց կացնել. իմ ձեռքիցս նը-  
րան ազատելը հեշտ էր հա՛: Դէ՛, էլ ի՞նչ  
կայ. դու՝ որ այդպէս ամենքի համար փրկիչ  
ես եղել դէ՛, մէկ ինքդ քեզ փրկի՛ր, տեսնեմ  
ի՞նչպէս ես փրկում»։

Տէլլը նետը տափից վերցրեց. նրա ոտու  
ձեռքը գողգողում էր. աղաչանքը աչքերին,  
յօյսը կտրած, նա մէկ տեղակալի երեսին էր  
մտիկ տալիս, մէկ երկնքին։ Իսկ չորս կողմի  
բազմութիւնը առաջվայ պէս վախից լուռ  
ու մունջ նայում էր սրան . . . .

Յանկարձ, Տէլլը նետամանից մի նետ էլ  
հանեց, կոխեց կոնատակը ու գաղեց։ Ի՞այց  
այդ բանը Հէսալերի աչքովն ընկաւ։

«Հայրի՛կ, այ հայրիկ—կանչում էր երեխան

ծառի տակից—տնտղի՛ր ու խփի՛ր, մի՛ վախե-  
նար, և չեմ վախենում: Տէլլը աղեղը լսրեց:  
Եյդ ժամանակ Հէսսերի մարդկերանցից մէկը  
էլ չըկարողացաւ համբերել սկսեց տեղակալին  
յանդիմանել ասելով, որ նա խղճմտանք չու-  
նի, քարտամիւտ է. քիչ էր մնացել, որ նրա վրա  
յարձակվի ու սուրի ու էլլը տայ նրան: Բոլորն  
էլ իրանց ուշադրութիւնը այս երկուսի վրա  
էին գարձրել ու սպասում էին թէ տեսնեն  
սրա վերջը ի՞նչ կրլինի...: Իսկ աղեղը քանի  
գնում՝ այնքան աւելի էր լարվում: և յան-  
կարծ —ով էր, ովչէր— բազմութեան միջեց  
մէկը կանչեց. « խնձորը վէր ընկաւ, խնձորը  
վէր ընկաւ. Տէլլը դիաչել է. խփել է խռն-  
ձորին, խփել է»: Երեխայի պապը՝ Պիւրո-  
տը, վախութիւնից ու ուրախութիւնից քիչ  
մնաց, թէ կանգնած տեղը վէր ընկնի: Պատիկ  
Վալտերը վերցրեց գետնին ընկած խնձորը և  
ուրախ ուրախ հօր մօտը վազեց, ասելով.

« Հայրիկ, հայրիկ, ահա խնձորը. հը, տես-  
նում ես, որ ես ասում էի. ախր ես գիտեի,  
որ դու ինձ չես խփիլ»:

Տէլլը որդուն գրկեց, իսկոյն չոքեց ու սկսեց  
աղօթել ու վառք տալ Աստծու ամենակարող  
զօրութեանը: Հէսսերը Տէլլի ձեռքեց առաւ  
խնձորը ու ինքը իր աչքովը տեսաւ, որ իսկ  
որ նետը խնձորը ծակել էր ու անց կացել:  
Յետոյ, նա դառնալով գէպի ոլսութը՝ Տէլլը,  
հարցրեց.

« Իսկ այն միւս նետը ինչու համար կոխե-  
ցիր կրնատակդ՝ թագըրիր»: Առաջին անգամից  
Տէլլը չիմացաւ, թէ ի՞նչ ասի. բայց մի քիչ  
սուս արեց ու ասեց.

« Ոկի, աղա, հէնց այնպէս. մեղանում այդ-  
պիսի սովորութիւն կայ»:

« Դա էլ մի պատասխան է, որ գու ես տա-  
լիս: Զէ՛, դու ինձ Ճշմարիտն ասա. մի՛ վախե-  
նար, բաց բացարձակ պատասխանիր. ինչ էլ  
որ լինում է՝ լինի, ես քեզ բաշխում եմ»,  
ասեց Հէսսերը: Տէլլը նայեց տեղակալի երե-  
սին ու շնչակառը կերպով պատասխանեց նրան:

« Աստուածանից թագուն չէ քեղանից ինչ  
թագնիմ, աղա. մաքում դրել էի, որ եթէ

պատահմամբ նետը որդուս դիպչէր, միւս նետը քեզ էի խփելու՝ սպանեմ»:

**Տեղակալ Հէսոլերը երկար լռութիւնից յետոյ ասեց.**

«Դէ՛, հիմա ինչ որ էլ ուզում է լինի, ևս քեզ խօսք տուի, որ կը բաշխեմ քեզ կեանքդ քեզ եմ բաշխում. իմ խօսքս խօսք է, ասածս ասած: Ի՞յց որովհետև հիմա ևս իմացայ քոչար մտադրութիւններդ՝ դրա համար էլ ևս քեզ մի այնպիսի ծակ կոխեմ, որ սկի Աստծու արդար լցուի երեսն էլ չը տեսնես: Ե՛յ, տղեւք, ձեզ հետ եմ այս լոպէիս սրա ոտուձեռը մի լաւ կապոտեցէ՛ք»: Ասելն ու անելը մէկ եղաւ. զինուորները խսկոյն վրա թափվեցին՝ իրանց մեծի հրամանը կատարեցին: Ի՞ազմութիւնը **Տէլլի** չորս կողմը կտրեց. ամենքն էլ սկսեցին նրան մնաս բարեւ ասել: «Քաջ որսորդը օրհնեց իր որդուն, ասելով.

«Ահա այնտե՛ղ է քո հայրիկը. այնտե՛ղ՝ երկնքումն է նա. նրան աղօթի՛ր գու միայն կենդանի լինես, ինձ էլ Աստուած կօգնի: Այս ինչ որ քեզ ասեցի, կասես մօրդ»:

**Այս ասելով,** նա համբուրեց **Վալտերին** ու բազմութեանը գլուխ տալով և մնաս բարեւ ասելով, Հէսոլերի ետեկց ընկած՝ գնաց. նա պահապաններով շրջապատված էր: **Տեղակալը** վճռեց իր ասածը կատարել այսինքն **Տէլլին** մի այնպիսի տեղ գցել որ նա էլ Աստծու տուած լցուը չը տեսնի. նաւակով նըրան Փիրվալ՛շտագտի լջովը անց կացրեց ու տարաւ իր **Ախտանիստ** ասված հեռու ամբոցը: **Տէլլը** կապած ու կապկապած ընկած էր նաւակի յատակին և ինքը իր մաքումը արդէն մնաք բարեւ էր ասում կնոջը ու որդիկերանց: «Նաւակումը **Տէլլից** ու Հէսոլերից բացի նստած էին՝ նրա զինակիրը և մի քանի թիավարներ. իսկ **Տէլլի** նետամանը ու աղեղը զեկի մօտ էին գտնվում: Յանկարծ սարերից մի այնպիսի քամի՛ վեր կացաւ, մի այնպիսի՛ քամի, որ վախութիւնից քիչ մնաց թէ թիավարների շունչը կարվե. էլ նրանցում ջան չէր մնացել ամենքն էլ կարծում էին, որ էլ պրծում չը կայ, որ կորան՝ գնացին: Հէնց այդ միջոցին՝ նրանցից մէկը՝ դառնալով դէպի տեղակալը, ասեց.

«Աղա, էլ մեզ պրծում չկայ. բոլորեք եանս  
էլ մի մազից ենք կախ. ոչ դեկավարը, ոչ մենք՝  
թիավարնեա չենք իմանում, թէ ձանսապարհը  
այս քարքարոտում որտեղով է գնում: Բայց  
Տէլլը մեզ հետ է, նա համ ուժեղ է, համը  
դեկավարել զիտէ. ուրեմն, աղա, ի՞նչ կը լինի,  
որ մէկ հրամայէք նրան, որ մի քիչ մեզ հա-  
մար դեկավարութիւն անի»:

Խսկոյն յետ արեցին Տէլլի ոտուձեռքը.  
Հէսսլերը նրան հրամայեց, որ զեկի մօտ նրս-  
տի, իսկ դրա փոխարէն խոստացաւ աղատու-  
թիւն շնորհել: Տէլլը նստեց, ուր հարկն էր,  
ու սկսեց դեկավարել բայց միևնոյն ժամանակ  
իր աչքի տակով նայեց, թէ տեսնի, որտեղ է  
աղեղը. իսկ դրանից յետոյ աչքը գցեց ժայռե-  
րին ու սկսեց ման գալ ու գտնել վեր ցատ-  
կելու համար մի յարմար ժայռ: Յանկարծ նր-  
րա աչքը վերել տափակ մի ժայռ տեսաւ: Վ-  
լիքների զլիխն կախ ընկած, դիք ու բարձր  
ժայռ էր և մեծ հնար ու սիրտ էր հարկաւոր  
որ մարդ կարողանար նաւակից այնտեղ ցատ-  
կել:

«Նը, տղե՛րք, դօչչա՛լ դրար եկէք<sup>1)</sup>», դօ-  
չաղ» գոռաց Տէլլը թիավարներին դառնալով.  
մեր գժուարը մինչև այն ժայռն է է՛, տես-  
նում էք. այն տեղ հասանք թէ չէ՝ էլ այն-  
քան վախ չըկայ»: Թիավարները, որքան իրանց  
ուժումը ոյժ կար, թիերին զօռ տուին և  
մի երկու ըսպէ չանցած՝ նաւակը հասաւ ի-  
րանց ուզած տեղը: Այդ ժամանակ Տէլլը «այ  
Ասուած» ասեկով ու իր զէնքը ձեռքը գցե-  
լով, հը արեց՝ ցատկեց ու զենքը գցեց ժայռի  
գլուխը. իսկ նաւակը ստով գրոհ տուեց ու  
ալիքների ռէխար գցեց:

Զինորսը իր մանուկ որդու հետ լջի ափին  
կանգնած սարսափով նայում էին այս բանին.  
նրանք տեսան, թէ ի՞նչ հրաշքով ազատվեց  
Տէլլը ու հրառւանքով ողջունեցին այդ քա-  
ջասիրտ աղամարդուն: Ակիշէլմ Տէլլին նր-  
րանք պատմեցին, որ նրան բռնելուց յետոյ  
շվեյցարացիք մի քիչ կոտրվել են:

«Գնաա կնոջս մօտ ու ասա՛, որ ես ազատ-

1) «Դրար գալ նշանակում է շարժվել:

վել եմ, բայց դեռ թագ եմ կենում. ով գիտէ,  
գուցէ տեղակալը աղատվեց» ասեց Տէլլը ձրկ-  
նորսին, որը նոյնպէս մասնակից էր Թիւտիւմ  
եղած խորհրդին: «Իսկ աներոջս և առհասա-  
րակ Թիւտիւմ եղածներին, շարունակից Տէլ-  
լը, կասես, որ թող զարդ չանեն ու քէփները  
սազ պահէնս. կասես, որ Տէլլի ձեռքը հիմա  
աղատ է և շուտով նրա անունը վեր կինի ու  
նրա մասին ամենքն էլ կը սկսեն խօսել: Իսկ  
հիմա որդիդ թող առաջս ընկնի ու ինձ տա-  
նի Իրունին, որովհետեւ իմ այնտեղ լինելս  
հարկաւոր է»:

Ինչքան էլ որ ձկնորսը հարցուփորձ արեց  
Տէլլին, թէ գնում է Իրունին ի՞նչ անի, ի՞նչ  
կայ, ի՞նչ ընկայ և այլն, բայց որսորդը ոչինչ էլ  
պատասխան ըը տուեց. երեխայի հետ միասին  
ձանապարհ ընկաւ ու արագ արագ, նեղ կա-  
ծանը բռնելով, գնաց դէպի անտառը: Եռանց  
հանգստանալու, համարեա թէ, վաղէվաղը ե-  
րկը վերստ ձանապարհ գնալուց յետոյ, նրանք  
հասան Իրունին. այնտեղից մի զառիվայր ձա-  
նապարհ տանում էր մինչեւ Արևմտախտ, ուր

և ձկնորսի տղան Տէլլին թողեց ու վերադար-  
ձաւ տուն: Եւյս ձանապարհի երկու կողմն էլ  
մուայլ ժայռեր էին պատել. նրանցից մէկը՝ որ  
թփերի մէջ կորած էր, մի փոքր դէպի առաջ  
էր դուրս ցցվել և հէնց այդտեղ կանգնեց  
մեր քաջ որսորդը ու թուլացած՝ նստեց այն-  
տեղ քարի նստարանի վրա, որը նեղացած ձա-  
նապարհորդների համար էր շինված: Պէլ-  
հէլմ Տէլլը մաքումը դրել էր մի կտրական  
բան անել: «Նա գիտէր, որ, եթէ տէրը մի՛ ա-  
րացէ, տեղակալը դուրս եկաւ լջի ափը, հէնց  
նոյն իսկ այս ձանապարհովն է գալու Արև-  
մտախտ: Տէլլը մտադրեց թագ կենալ թփերի  
միջին և այնտեղից նետով խփել ու սպանել  
ձէսսլերին: «Ես էլ կը փախչեմ դէպի ժայռերը,  
կը թագնվեմ ու դրանով նրա մարդկերանց  
ձեռքից կը պլունեմ»—ասումէր նա ինքն իրան:   
Մտածմունքների տակ նրա սիրտը այնպէս էր  
ձնշված, որ կարծես թէ մի ծանր քար էին  
դցել նրա վրա: Մինչեւ այսօրվան օրը Տէլլը  
մարդու վրա, որ ասես, մի անգամ էլ ձեռք  
չի բարձրացրել. միշտ սպանել է, վէր է դցել

Վայրենի՞ կենդանիներ և գաղաններ, ուրիշ ո-  
չինչ իսկ հիմա իր նման մարդուն պիտի սպա-  
նի, մարդասպանի անունը պիտի ստանայ: Ե՛ իր  
մի բան էլ կայ. նա չարագործ ։ էսսլերի կա-  
տաղութիւնից պիտի պաշտպանի իր կնոջը,  
երեխաներին և քաղցր հայրենիքը: Այս թշ-  
ուառ նետովը Տէլլը կազատի իր հայրենի եր-  
կիրը . . . : Նա շատ սպասեց. անհամբերու-  
թեամբ նայում էր դէպի ուղին և շատ նայե-  
լուց աչքերը ջուր կարեցին: Մօտից մի քանի  
մարդ անց կացաւ, բայց ոչ մէկն էլ չէր իմա-  
նում, թէ տեղակալ ։ էսսլերը երբ է անց կե-  
նալու:

Մի Արմգարդա անունով գիւղացի կին էլ  
իր փոքրիկ երեխաներով, գուրս եկաւ ու ձա-  
նապարհին կանգնեց: Այդ կինը լսել էր, որ  
այդտեղով անց է կենալու ։ էսսլերը և այդ  
պատճառով եկել էր այստեղ սպասելու մինչեւ  
նրա գալլ, որ եկած ժամանակ ընկնի նրա ոտ-  
ները ու խնդրի, որ իր մարդուն հանել տայ  
բանդից: Տէլլի և Արմգարդայի մօտ մի քանի  
մարդ էլ հաւաքվեց: Յանկարծ, ձանապարհո-

վը մի ձիաւոր, ձին քշելով, անց կացաւ. «աե-  
ղակալը, տեղակալը գալի՛ս է» գոռաց նա:

Իշպէս որ վերև ասեցինք, ժայռերից մէկը  
մի փոքր առաջ էր դուրս ցցվել՝ դէպի ձա-  
նապարհի մէջը. այդ ժայռի զլուխը թփերով  
պատած էր: ։ էնց որ Տէլլը ձիաւորի խօսքե-  
րը լսեց թէ չէ իսկոյն տեղից վեր ցատկեց,  
մտաւ թփերի մէջը ու կորաւ: Իսկ գիւղացի  
կինը իր երեխաների հետ գնաց՝ ձանապարհի  
մէջտեղում կանգնեց: Ա երջապէս, զուրս ե-  
կաւ ։ էսսլերը իր զինակրի հետ միասին՝ իր-  
կուսն էլ ձի նստած: Արմգարդան վաղեց դէ-  
պի ձիաները ու նրանց առաջը կորեց:

«Ի՞նչ ես ուզում: ։ ։ եռու կաց ձանապար-  
հից. ձանապարհ տուր» գոռաց տեղակալը:

«Եղա՛, Եստուած սիրես, խեղճ եմ. ազա-  
տիր իմ մարդուս, արձակիր նրան, ասեց խեղճ  
կինը: Նա գնում էր սարերը խոտ հարում ու  
դրանով մեղ պահում: Եհա այժմ վեց ամիս  
է, որ նա բերդումը նստած, քո դատաստանիդ  
է սպասում: մենք էլ առանց նրան մնացել ենք

մի կտոր չո՞ր հացի կարօտ ու քիչ է մնում, որ  
քաղցածութիւնից մեռնենք»:

«Նեռու կացիր, կորի՛ր, դէ՛: Խաւ ժամա-  
նակ ես գտել. խօսք՝ բան ունես ասելու, եկ  
Խիւսնախտ. Հիմա սրա ժամանակը չէ» ասում  
էր Նէսուլերի զենակիրը: Իայց կինը տեղիցն էլ  
չէր շարժվում, կանգնել էր ու լաց լինում:  
Նէսուլերը շնացաւ ու հրամայեց որ նրան բռո-  
նեն. բայց Արմդարդան, ձիան սանձը բռնելով,  
լացի ձայնով ասում էր.

«Դէ՛, ինչից եմ վախենում: Էլ ի՞նչ ունեմ  
կորցնելու որ կորցնեմ: Ի՞նձ էլ երեխաներին  
էլ զցի՛ր ձիուդ ոտի տակը ու կարկոխուրը:  
Եւչերդ չուում ես, կարծե՛ս թէ վախենումեմ:  
Ինչքան ուզում ես չոի՛ր: Տունս քանդվել է  
ու պրծել. այնքան անրազդութիւն տեսայ, որ  
էլ ինձանում յօյս չը մնաց» և իսկ որ, այս ա-  
սելով, Ամրդարդան երեխայոց հետ միասին ըն-  
կաւ ձիաների առաջը ու գոռաց.

«Առև տուր, կո՞խ տուր, որբ ու անտէրունչ  
մնացած բալաներիս քչի՛ր, քշեր ձիդ ու անց  
կացիր մեղանով. մեռնենք ու պրծնենք քեզա-

նից լաւ է, քան թէ այսպէս ապրենք. Էլ բան  
չը մնաց, որ գու մեր զլուխը չը լինես բերած:  
Աւանայ քո օրը, որ մեր օրը սևացրիր»:

Նէնց այդ միջոցին տեղակալի առաջը գուրս  
եկաւ մի գիւղական հարսանիք իրանց գափու-  
զուռնայով: Նարսանիքաւողների խումբը, այս  
սրտաձմյիկ պատկերը տեսնելուն պէս, սառչեց  
ու իսկցին տեղնուտեղը կանգնեց. իսկ երա-  
ժիշտների ձայնները այնպէս կարվեց, որ հէնց  
իմանաս, թէ փորները ընկաւ:

«Ե՛յ ծառաներս, որտեղ էք. եկէ՛ք այս խել-  
քից գնացած կնոջը քաշ տաւեցէ՛ք՝ ձանա-  
պարհից հանեցէ՛ք. եթէ ոչ իսկ որ, ոտնա-  
կոխ կանեմ ու անց կենամ» բղաւում էր Նէսու-  
լերը: «Աա ի՞նչ յանդնութիւն, համարձա-  
կութիւն է. սա էր մնացել. Էլ հանդսուութիւն  
չն տալիս մարդու, ձանապարհին են բռնում:  
իրանց հարսանիք-մարսանիքներով ձանապարհս  
են կտրում: Անպիտաններ, շուն անիրաւներ.  
անիծածներ, ես ձեզ կասեմ. տեսէ՛ք ես ձեզ  
ի՞նչ կանեմ. ձեր զլիեն մի օյին բերեմ, որ...  
այնպիսի՛ օրէնքներ հնարեմ ձեզ համար, այն-

պիսի՝ պատիմներ, որ . . . »: « այց յանկարծ, դեռ խօսքը չը վերջացրած, և էսալերը ձեռքը դրեց սրտին ու պինդ սեղմեց. նետը դիպչել էր նրա սրտին: « Նա մի այս կողմ՝ մի այն կողմ թեքվեց ու վէր ընկաւ ձիուց. « վայ, աս Տէլլի նետն էր » այս էր տեղակալ և էսալերի վերջին խօսքերը:

Եւ ճշմարիտ որ, այն բոպէին քարի գլխին երևաց Վայշէլմ Տէլլը: « Հը, նետ գցողին ճանաչեցի՞ր: Հիմա կասեմ, որ սրանից յետոյ ազատ ենք, գերութեանը վերջ տուինք. մեր հայրենիքը պրծաւ քեզանից. Էլ չե՛ս կարող վասս տալ » այս խօսքերը ասելով, Տէլլը կորաւ ժայռերի միջին:

Ամեն կողմից ժողովուրդը վազ էր տալիս դէպի ճանապարհը. հարսանիքը ցրիւ եկաւ: Ամենըն էլ մեռնող տեղակալի չորս կողմը կըտրցին և նայում էին իրանց այդ չարագործի վերջին տանջանքներին: Որ ասես, սկի մէին էլ տեղեց չը շարժվեց, թէ ինչ է նրան օգնութիւն հասցնի. ոչ մէկի երեսին էլ շաւակցութեան նշյլն անդամ չէր երևում: Դեռ այդ ո-

չինչ հէնց որ նա իր վերջին շունչը տուաւ թէ չէ, իսկըն հարսանիքի գիւղական երաժիշտները մի ժողովրդական ուրախ երգ սկսեցին ածել. ամենքը սկսեցին մէկմէկու վզով ընկնել իրար համբուրել, գոռալ ու գոչել. « ազատ ենք, ազատ, այ եղբայրներ, բարեկամներ. մեր շարագործը սատկեց՝ պրծաւ. սրանից յետոյ մենք ազատ ենք նրանից, բոլորովին ազատ: Դէ՛, շուտ արէք, սարերումը կրակներ վառեցէ՛ք. դրանով ենք իրար նշան տալու: Կմեն մարդ թող գէնք վերցնի, զնում ենք. եկէք գնանք քանդենք բերդերը, աւերան գարձնենք, կոտրատե՛նք բանզերի գոները... փշուե՛նք մեր գերի ընկած եղբայրների շղթաները ու զատե՛նք նրանց »:

Իոլոր բազմութիւնը աղմկալի կերպով ցըրիւ եկաւ. այն զառիվայր ճանապարհին մենակ զինակիրը մնաց, որը իր տիրոջ գիտակի վրա ընկած՝ լաց էր լինում:

Տէլլի կինը՝ հետվեգան, ուրախութեամբ լսեց, որ իր ամուսինը կենդանի է և շուտով գալու է տուն: « Նա արդէն մարդուն մեռած

Էր համարում և շատ դառն արտասունք էր թափել նրա վրա. իսկ այժմ իր երեխաների հետ միասին նրա գալուն էր սպասում, բայց հանգիստ չէր կարողանում սպասել: Սեղանի վրա ընթրիք դրեց ու կրակ վառեց, որ համ Տէլլը ցրտից տաքանայ, համ էլ նրա շորերը չորացնի:

«Երեխացք, կրկնում էր Նեղվիդան անդադար. զիտէք ինչ կայ. ամսր այսօր հայրիկը գալու է. զիտէք թէ չէ. արդեօք իմանում էք, որ նա ազատվել է, որ մենք ամենքս էլ ազատվել ենք: Տեսնում էք՝ դուք ի՞նչ հայր ունեք. նա փրկեց, նա ազատեց իր հայրենիքը. նա մեր պարծանքն է. ձեր հօր անունովը պիտի պարծենաք, որդիք»:

Բայց փոքրիկ Վալտերը ուզում է ցցյ տալ որ ինքն էլ կայ. չի ուզում որ իրան մոռացած լինեն:

— «Մայրիկ, ասում է նա, զիտէս, ամսր նետը իմ գլխիս մօտովը տժժալի անց կացաւ. իսկ ես, որ ասես, մի մազե չափ էլ չը ծռվեցի»:

— «Վույ, կծեմքեղ, ուտեմքեղ նախշուն

բալաս. այ դու իմ սիրտս, իմ հոգիւս. էլի դու իմ կշախս ես. Աստուած պապը քեզ պահեց ինձ համար» ասում էր մայլը գրկելով:

— «Մայրիկ, մայրիկ, հայրիկը եկաւ, հայրիկը» ուրախ ուրախ կանչեց Վակէլմը:

— «Ուր է, ուր» հարցրեց Նեղվիդան. նա մի ուզեց ամուսնի առաջը վազել բայց տեղեց չը կարողացաւ. շարժվել ուրախութիւնից քիչ մնաց թէ վեր ընկնի. դրան շրջափայտից (չարչիվա) բռնելով մի կերպ իրան պահեց: Տէլլը մտաւ սենեակը. երեխայքը խկցն վազեցին ու փաթաթվեցին հօրը վզովը: Տէլլը դառնալով դէպի կինը, ասեց.

— «Վզի Նեղվի գա, Աստուած մեզ օգնեց: Դէ՛, հիմիկանից դէնը էլ մենք անբաժան կը լինենք»:

— «Դէտք է իմանայիր, թէ քեզ համար ինչպէս էի վախենում» ասում էր Նեղվիդան լալով ու գրկելով իր մարդուն:

— «Դէ՛, լաւ է, հանգստացի՛ր. ամեն ինչ անց կացաւ՝ պրծաւ. տեսնում ես, ես էլի ձեր կշախն եմ, ձեզ հետ միասին»:

“—«Հայրիկ, բաս քո աղեղդ նւր է» հարցրեց Վալտերը:

—«Մի սուրբ տեղ եմ դրել մատուռում, որդի՛ս: Ել որսի համար ինձ հարկաւոր չէ», պատասխանեց Տէլլը որդուն:

Հեղվեգան, զարհուրած, յետ քաշվեց ամուսնուց, ասելով. «սպանեցի՞ր, առաջ, դու սպանեցիր . . . այս ձեռքը . . . մարդասպանի՞ ձեռք է . . . »:

—«Եյ՞, տեսնում ես. այս ձեռքն է փրկել մեր երկիրը. սա՞ է ձեր պաշտպանը, ասեց Տէլլը համարձակօրէն: Ես մաքուր խղճմտանքով եմ ձեռքս դէպի երկինքը բարձրացնում»: Հէնց այդ միջոցին ներս վաղեց փոքրիկ Վալէ Հէլմը. նա գնացել էր միւս սենեակը, որ հօր համար չոր շորեր բերի:

«Հայրիկ, կանչում էր նա, ներս վաղերով, պապը գալիս է, նրա ետևիցն էլ մի մե՛ծ, մե՛ծ բազմութիւն: Վեզ կանչում են ու ասում են, որ դուքս գաս փողոցը»:

Տէլլը կնոջ ու երեխաների Հետ միասին դուքս եկաւ դուռնը: Եւ իսկ որ, մեր քաջ

որսորդի տան առաջին մեծ բազմութիւն էր հաւաքվել: Վալտեր Փիւրստն էլ էր նրանց միջին: Տէլլի որդիները արդէն վազել էին ու գնացել նրա մօտ: Ըազմութեան մեջ կանայք էլ կային, երեխաներ էլ կային և ազնուականներ՝ որոնք նշնապէս խառնվել էին ապստամբների հետ: Եզդկերքը ձեռքներին մի մեծ ձող բռնած, որի ծայրին սպանված Հէսսլերի զրդակն էր ցցած, ծիծաղելով ու ծաղը անելով, դէպի առաջ էին գալիս. երաժիշտներն էլ իրանց փողերն էին փչում: Հէնց որ Տէլլը տընից դուքս եկաւ թէ չէ, իսկոյն բազմութիւնը նրա առաջը կտրեց՝ կիսաշրջան կազմելով. երաժշտութիւնը, ծիծաղը, ուրախութեան ձայները, բոլորն էլ նոյն բոպէին կտրվեց. բազմութեան միջից առաջ եկաւ Տէլլի աներ՝ Վալտեր Փիւրստը, Մելխտալի ու Ծտառւֆախերի հետ. նրանք մօտեցան սրտաշարժ եղած Տէլլին ու համբուրեցին նրան:

—«Դէ՛, Վալէհէլմ, մենք եկել ենք քեզ չնորհաւորելու ու շնորհակալութիւն անելու քեզանից: Մեր հայրենիքը հիմա բոլորովին

աղատ է: Ամեն ինչ այնքան շուտ, համ էլ այնքան լաւ գլուխ եկաւ, որ սկի այդպէս մենք ինքներս յցս չունեինք: Հէնց որ դու, տեղակալին սպանելուց յետոյ, փախչեցիր ու թագ կացար սարերումը թէ չէ իսկոյն քեզանից յետոյ սարերումը կրակներ վառեցին ու բերդի վրա յարձակվեցին: Վո նետի ձայնն էր, որ ամենքի մէջ ապստամբութեան շարժում զցեց: Մէր թշնամիները յաղթվեցին, ջարդուփշուր եղան. նրանց բոլոր բերդերը այժմ մեր ձեռքին է: Այն բանդը՝ որ մենք մեր ձեռքով մեղ համար էինք շինում, քանդեցինք ու աւերակ դարձրինք, հիմնովին աւերակ: Տեղակալ Լիանդսիրդը առաջ մի ուղեց փախչել բայց Մելիտալը նրա ետեից ընկաւ, հասաւ ու բոնեց՝ բերաւ իր կուրացած հօր մօտ: «Եհրունին նրան չէր ուզում բայց թողնել միայն նա երդում կերաւ, որ էլ Ը վեցարիայում չէ ֆնալ: Մենք մենակ թագաւորիցն էինք վախենում, բայց Աստուած նրան էլ իր ալιարմունքների համար պատիժ հասցրեց: «Նա խել է իր եղբօրորդու ձեռքից նրա ժառանգութիւնը.

նա էլ խփել է նրան սպանել: Եւ վերջապէս, թագաւորի որբեայրի մնացած կնոջ կողմիցն էլ մարդ է եկել ու թուղթ բերել այդ թրդթովը նա մեղ յիտ է տալիս մեր առաջկայ իրաւունքները: Հիմա, ինչպէս տեսնում ես, Տէլլ սրանից յետոյ մենք աղատ ենք և հենց դրա համար է, որ այսքան բազմութեամբ եկել ենք քեզ շնորհաւորելու, իբրև մեր աղատողին: Տեսնում ես այս սարերը, քանի որ սրբանք այս տեղ են՝ իմացած լինես, որ քո անունդ միշտ կը յիշվի, միշտ կը մնայ. այն չեն մոռանալ, որ Տէլլը նետով խփեց ու իր հարազատ որդու զլիից խնձորը թոցրեց. որ Տէլլն էր, որ սպանեց Հէսալերին ու աղատեց Ը վեցարիան»:

Կեցցէ՛ մեր Տէլլը, կեցցէ՛. կեցցէ՛ մեր փրուկիչը, կեցցէ՛ մեր աղատողը, կեցցէ՛—այս աղմալի գոռում գոյումները ու փողերի ձայները կտրեցին Փիւրատի խօսքերը:

Հեռուում, չորս կողմի գիւղերում, զանգակների ձայնն էր, որ տարածվում էր դէպի ամեն կողմ: նրանց զրբնդ-զրբնդոյն էր, որ սար ու

ձոր լցել էր ու ամեն տեղ էլ ձայն էր տալիս:  
Եյստեղ ու այնտեղ կրակներ էին վառվում  
ու պլպլում: «Ուռայ, հէյ, ուռայ. ազատ հնք  
ազատ. ապրի՛ Տէլլը, ապրի՛. կեցցէ՛ նա, կեց-  
ցէ՛»—ամեն տեղ էլ այս էր լսվում:

Եյս բանը 1308 թուականի կաղանդ օրն էր:



ՀՀ Ազգային գրադարան



NL0359076

